

**ՆԵՍՏՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԻԱԲՆԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՊԱՅՔԱՐԸ. ԲԱՐԾՈՒՄԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

Բանալի բառեր՝ *Բարձումա, նեստորականներ, դավանանք, Հայաստան, Պարսկաստան, Բյուզանդիա, միաբնակ, երկաբնակ, Եդեսիա, Պերոզ, քաղկեդոնականություն:*

Նեստորականների և միաբնակների միջև դավանաբանական պայքարը V դարում սուր բանավեճերի առարկա է դառնում: Չուտ դավանաբանական վեճերը էլ ավելի են խորացնում հիշյալ ուղղությունների միջև գոյություն ունեցող անջրպետը: Այս առումով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել միաբնակ ասորիների և հայ եկեղեցու հարաբերություններին, ինչը հայագիտության մեջ բավականին լավ է ուսումնասիրված, բայց արտասահմանյան հետազոտություններում մասնակի է լուսաբանված:

Նեստորականության կատաղի թշնամի Սիմեոն Բեթ-Արշամացին հույներից, հայերից և ասորիներից ամբողջ Իրանով մեկ վավերաթղթեր էր հավաքում, որ նրանք դեմ են Նեստորի վարդապետությանը: Սիմեոն Բեթ-Արշամացին մասնակցում է 506 թվականի Դվինի եկեղեցական ժողովին և հայերից էլ դավանական թուղթ է վերցրել, որ նրանք հեռու են նեստորականությունից¹: Իրանից եկած պատգամավորները դավանության նման թղթեր վերցրել են նաև ժողովին մասնակից վրացիներից և աղվաններից²: Հովհաննես Գաբեղենցու՝ Աղվանից եպիսկոպոսներին ուղղված մի նամակից³ պարզվում է, որ նեստորականությունը և քաղկեդոնականությունը զորացել էին Աղվանքում: Նամակում նգովվում

¹ **Տեր-Մինայան** 1971(բ), 39:

² **Նույն տեղում**, 42: **Գիրք թղթոց** 1901, 183:

³ **Գիրք թղթոց** 1901, 81-84:

են բոլոր հերձվածողները, հատկապես՝ նեստորականության հիմնադիրներն ու Քաղկեդոնի ժողովը՝ Լևոնի տոմարով հանդերձ: Աղվանք է ուղարկվում Մատթեոս քահանան հերձվածողների դեմ պայքարելու համար, Աղվանից եպիսկոպոսներին առաջարկվում է հերձվածողներին հալածել, վռնդել և երեք կամ ավելի եպիսկոպոսների ուղարկել Հայաստան՝ հավատի վերաբերյալ ճշմարտությանը վերահասու լինելու համար⁴:

Միաբնակ ասորիների, օրինակ, հուլիանիտների խընդրանքով հայոց եկեղեցին դավանաբանական վեճերում պաշտպանում էր նրանց, և հայոց կաթողիկոսն էլ ձեռնադրում էր նրանց եպիսկոպոսներին: Ներսես Բ կաթողիկոսը ձեռնադրում է հուլիանիտ Աբդիշոյին, որն այդ մասին թուղթ ստանալով՝ գալիս է Ասորիք⁵: Հայոց եկեղեցու այս դիրքորոշումը վախեցնում էր նեստորականներին: Ընդհանրապես կարելի է տեսնել, որ ասորական եկեղեցիները «ամենամեծ արժեքն են տալիս իրենց հայ հարևանների կարծիքին և շարունակ աշխատում են հաղորդակցություն պահպանել նրանց հետ. կամ եթե չունին այդ հաղորդակցությունը, որևիցե կերպով աշխատում են այդպիսի հարաբերություն ստեղծել»: Շարունակելով իր միտքը՝ Ե. Տեր-Մինասյանցը գրում է. «Եվ այդ հասկանալի է. ասորի հարևանները տեսել էին, թե ինչպես հայոց եկեղեցին իր հավատի համար հզոր պարսիկների դեմ ազատ համարձակ կռվի էր ելել և երկարատև անհավասար պայքարից պատվով և իբրև հաղթական դուրս եկել: Նրանք տեսնում էին, որ պարսիկներն անգամ հայերի հետ ուրիշ կերպ են վարվում՝ նրանց զորեղ իշխաններից ակնածելով: Ուրեմն ինչո՞ւ չպահպանել այդ եկեղեցու հետ եկեղեցական հաղորդակցություն, մանավանդ որ ամեն հարաբերություն հունականի հետ արդեն դադարել

⁴ Տեր-Մինասյան 1971 (ա), 377-378:

⁵ Տեր-Մինասեանց 2009, 86, 102: Айвазян 1976, 63.

էր»⁶: Պատահական չէ, որ միաբնակության գլխավոր կենտրոն Մար-Մաթայի վանքի մետրոպոլիտները ձեռնադրվում էին հայոց կաթողիկոսների կողմից⁷:

Եդեսիայի նշանավոր եպիսկոպոս Ռաբուլասի⁸ մահից հետո՝ նրա հաջորդ Իբասի օրոք, Եդեսիայում ուժեղանում է նեստորականների ազդեցությունը: 457 թվականին նրա մահն առաջ է բերում զորեղ ընդդիմություն, և բոլոր նեստորական վարդապետները հալածվում են Եդեսիայից պարսից հողը: Վերջնական հարվածը հասցվում է նրանց՝ Եդեսիայի հոջակավոր, պարսկական կոչված դպրոցի՝ նեստորականության այդ հենարանի փակմամբ 489 թվականին⁹: Որքան թուլանում են հունական հողերում Նեստորիոսի կողմնակիցները, այնքան զորանում են նրանք պարսից իշխանության տակ՝ վայելելով մանավանդ Պերոզ թագավորի հովանավորությունը:

Պարսիկներն իրենց պետության սահմաններում ապրող քրիստոնյաների նկատմամբ որոշակի քաղաքականություն չեն ունեցել, չնայած պարսիկ պաշտոնյաները միշտ էլ կասկածանքով են վերաբերվել քրիստոնյաներին և գտել են, որ նրանք իրենց երկրում Բյուզանդական կայսրության համար ամուր հենարան են: Նրանք երբեմն ուժեղ հալածանքներ են կազմակերպել քրիստոնյաների դեմ, սակայն երբեմն նաև նպաստել են նրանց գործունեությանը:

Այդ մեղմությունն արդյունք էր այն իրողության, որ քրիստոնյաները պարսկական տերության մեջ արհեստների, ապրանքների արտադրության, հատկապես միջազգային առևտրի ասպարեզում Պարսկաստանին ի նպաստ շատ կարևոր գործ էին կատարում և, բացի այդ, գանձվող

⁶ **Տէր-Մինասեանց** 2009, 89:

⁷ **Նույն տեղում**, 102, 109:

⁸ **Atiya** 1968, 248.

⁹ **The Church of the East** 2003, 26.

հարկերով հարստացնում էին արքունի գանձարանն ու վերնախավի գրպանները: Իրադրությունը փոխվեց, երբ Պարսկաստանի գահին բազմեց Հազկերտ Բ-ն (438-457 թթ.), որն իր ներքին նոր քաղաքականությամբ փորձում էր բոլոր միջոցները կենտրոնացնել պարսիկների ձեռքը և քրիստոնյաներին դավանափոխ անելով՝ վերջնականապես զրկել նրանց մշակութային ու քաղաքական այլ հարաբերություններից և կապել Պարսկաստանի հետ: Բայց նրա այդ գործելակերպը չարդարացրեց իրեն, և նրան հաջորդած Պերոզ արքայից արքան (459-484 թթ.) ավելի ճիշտ ուղու վրա կանգնեց: Նա, հետևելով պարսկական նախկին քաղաքականությանը, նորից փորձեց օգտվել քրիստոնեական եկեղեցիների մեջ առաջացած հակասություններից: Ասորական աղբյուրներն այդ փոփոխության պատճառը, այսինքն՝ Պերոզին հուշողը, ասում են, որ եղել է Մծբինի եպիսկոպոս Բարծուման¹⁰: Այդ է պատճառը, որ ասորի նեստորական հեղինակները բարձր գնահատական են տալիս Պերոզին¹¹՝ հավանաբար նկատի ունենալով պարսկական եկեղեցական քաղաքականության մեջ տեղի ունեցած այս փոփոխությունը: Եռանդուն Բարծուման կարողանում է ներշնչել Պերոզին այն միտքը, որ քրիստոնյաները երբեք սրտով չեն կաշի պարսից իշխանությանը և աչք չեն դարձնի կայսրերից, մինչև որ դավանանքի խրամատը չանջրպետի նրանց¹²: Պետք է, ուրեմն, առաջ տանել, խրախուսել նեստորականությունը, այլադավան քրիստոնյաներին բռնի ուժով ստիպել հարելու նեստորական՝ իբր պետական եկեղեցուն¹³:

¹⁰ *Chronique de Michel le Syrien* 1901, 123. Բարծուման ծնունդով Կորդվաց աշխարհից էր և ծագումով ստրուկ, ազատվել ու եկել էր՝ սովորելու Եդեսիայի եպիսկոպոս Իբասի օրոք Եդեսիայի հայտնի դպրոցում (տե՛ս **Ասորական աղբյուրներ** 1976, 246, ծնթ. 49):

¹¹ *Sources Syriaces* 1908, 147.

¹² **Ադոնց** 2006, 33:

¹³ **Labourt** 1904, 135.

«Պարսիկների դպրոցի» շնորհիվ առաջ գնալով՝ Բարձուման բացառիկ ուշադրություն էր դարձնում կրթությանը: 457 թվականին՝ Իբասի մահից հետո, երկբնակության հակառակորդները Եդեսիայում ակտիվանում են¹⁴, Բարձուման հեռանում է քաղաքից, որպեսզի Ակադեմիա կազմակերպի Մծբինում, որտեղ էլ հաստատվում են մեծ թվով ուսուցիչներ և աշակերտներ Եդեսիայի դպրոցից¹⁵: Մծբինը, շնորհիվ իր դպրոցի, դառնում է նեստորական եկեղեցու հոգևոր կենտրոնը, թեև կաթողիկոսի նստավայրը գտնվում էր Սելևկիա-Տիզբոն մայրաքաղաքում¹⁶: Բարձուման, անշուշտ, պարսկական արքունիքին քաղաքական նման գիծ թելադրելով, ոչ միայն ծառայություն էր մատուցում պարսկական կառավարությանը, այլև ուզում էր նման միջոցառումներով պարսկական տերության մեջ գտնվող քրիստոնեական եկեղեցիները և հավատացյալներին համախմբել նեստորական եկեղեցու գերիշխանության ներքո: Բարձումայի նման միջոցառումները ձեռնտու էին պարսիկների համար, որովհետև այդ ուժերի կենտրոնացումով ու համախմբումով ուժեղ ճակատ կարելի էր ստեղծել Բյուզանդիայի և նրա անմիջական հովանավորության տակ գտնվող բյուզանդական եկեղեցու դեմ: Զրադաշտական հոգևորականների ազդեցության տակ գտնվող Պերոզը հովանավորում է Բարձումային Իրանում գտնվող եկեղեցին պաշտոնապես նեստորական դարձնելու գործում¹⁷: Ուստիև այս առումով քրիստոնյաների սպանություններն ավելի շուտ ուղղված էին Իրանի քրիստոնյա եկեղեցիների միաձուլման և միասնականության դեմ, քան թե արգելում կամ խոչընդոտում էին քրիստոնեության տարածումը և զարգացումը:

¹⁴ Նույն տեղում, 130-152:

¹⁵ Macomber 1958, 143-144; Пигулевская 1956, 340.

¹⁶ Տեր-Պետրոսյան 1979, 82:

¹⁷ Macomber 1958, 147; Խորիկյան 2017, 113:

Ասորի պատմիչը պատմում է, որ իր նպատակին հասնելու համար Բարձուման դիմում էր տարբեր միջոցների, որպես պարսկական զորահրամանատար¹⁸ բանակի օգնությամբ գործի էր դնում բռնի ուժը, հալածանքը, արքորն ու բանտարկությունը. նա նեստորական եկեղեցու կաթողիկոս Բաբուայի՝ Բյուզանդիայի կայսրին գրած նամակը (նամակում գրված էր, թե՛ «Աստված մեզ անհիծված թագավորություն է տվել») հանձնում է արքայից արքա Պերոզին, և Բարձումայի այս մատնության հետևանքը լինում է այն, որ կաթողիկոսը մեղադրվում է լրտեսական գործունեության մեջ և գլխատվում¹⁹: Ասորական աղբյուրներից երևում է, որ նա այդ քայլին էր դիմել, որպեսզի ինքը բազմի կաթողիկոսական աթոռին, բայց դա չի հաջողվում, որովհետև նրա այդպիսի արարքներն ասորի եկեղեցականության ու ժողովրդի մեջ ատելություն են առաջացնում, և նրան չեն ընտրում²⁰:

Բարձումայի մասին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում հայկական աղբյուրները: Համաձայն Թովմա Արծրունու՝ Բարձուման եկավ Հայաստան՝ Արզնարզյուն և Մոկաց աշխարհը, որպեսզի այնտեղ ցանի նեստորական աղանդի սերմերը²¹: Այն հանգամանքը, որ հայ նախարար-

¹⁸ Пигулевская 1967, 99.

¹⁹ Chronique de Michel le Syrien 1901, 123. Տե՛ս նաև Labourt 1904, 130.

²⁰ Բաբուան նախկինում եղել էր զրադաշտական, ինչը պարսից արքունիքում դժգոհություն էր առաջ բերել, և նա նույնիսկ մինչև մահը երկու տարի բանտում էր անցկացրել:

²¹ Թովմա Արծրունի և Անանուն 1985, 130: Բարձումայի Հայաստան գալու մասին հաղորդում է նաև ասորի պատմիչ Գրիգոր Բարիեբրետսը, միայն այն տարբերությամբ, որ Բարձուման Հայաստան մտնելու վրա էր, երբ սպառնական նամակ ստացավ հայ նախարարներից իր մտադրություններից հետ կանգնելու պահանջով (տե՛ս **Տէր-Մինասեանց** 2009, 72: **Տէր-Մինասյան** 1971 (ա), 348-349): Ինչևէ, Հայաստանում նրա առաջխաղացումն արգելվում է (տե՛ս **Լեո** 1947, 110):

ներն անհանգստանում են և միջոցներ ձեռնարկում խափանելու Բարձումայի նեստորական քարոզը Հայաստանում, ցույց է տալիս, որ այդ քարոզչությունը երևի որոշ հաջողություն ունեցել է և մտքերի պղտորում ու շփոթություն է առաջացրել հայ եկեղեցու շրջանակներում, հակառակ դեպքում որևէ կանխիչ կամ հալածական միջոցի ձեռնարկումը հիմնավորված չէր լինի, նույնիսկ անկարելի կլիներ²²:

Թովմա Արծրունու տեղեկությունները հիմք են տվել եզրակացնելու, որ Բարձուման նեստորական հերձվածն ուժեղ կերպով տարածելու և հայ նախարարների կողմից երևի բուն ընդդիմության հանդիպելու պատճառով քսութամբ բանսարկություններ է կատարել նրանց մասին Պերոզ թագավորի առաջ և շատ արյունահեղությունների պատճառ դարձել, որովհետև հայ նախարարներին ու կաթողիկոսին իբրև ապստամբներ է ներկայացրել Պարսից թագավորի առջև, իբրև թե նրանք ուզում են Հունաց թագավորի հպատակության ներքո մտնել²³: «Գիրք թղթոց»-ի տեղեկությունները²⁴, ի թիվս այլ իրողությունների, ցույց են տալիս, որ հայոց եկեղեցին մերժում է որևէ հաղորդակցություն նեստորականների և նրանց դավանության հետ ու նզովում է նեստորականներին:

Դավանաբանական վեճերում ևս առանձնահատուկ տեղ ունեն Բարձուման՝ Եդեսիայի եպիսկոպոս Իբասի աշակերտը, որը Թեոդորոս Մոպսուեստացու գաղափարների տարածողն էր: Միջնադարյան եկեղեցական դպրոցի ուսուցման հիմքում ընկած էր Սուրբ Գրքի մեկնաբանությունը, հետևաբար կարևոր էր այն հարցը, թե ո՞վ և ինչպե՞ս է մեկնաբանում աստվածաշնչյան տեքստերը, ինչպիսի՞ հայացքներ են կրում Եդեսիայի և Մծբինի դպրոցների ուսուցիչները:

²² **Տեր-Մինասյան** 1971 (ա), 349:

²³ Մանրամասն տե՛ս **Տեր-Մինասյան** 1971 (ա), 349-351:

²⁴ « **Գիրք թղթոց** » 1901, 41-46:

Բարձումայի գործունեությունը նշանակալից էր ոչ միայն Մծբինի Ակադեմիայի պատմության համար, այլև որպես եպիսկոպոս՝ նա գրավում է բացառիկ տեղ ասորական եկեղեցու գործիչների շարքում:

Իրանի արքայից արքան Բարձումային մասնակից է դարձնում Բյուզանդիայի հետ սահմանների վերաբերյալ բանակցություններին²⁵, բայց միաժամանակ Պերոզ շահի հրամանով նրան վերահսկում էր մարզպան Քարդակը²⁶:

Որպես եպիսկոպոս՝ Բարձուման զբաղեցնում էր նշանակալից տեղ պարսից պետությունում և իր հայացքներով հարում էր նեստորականությանը: Այն դեպքում, երբ կաթողիկոսներ Բաբուն և Ակակիոսը ամուսնությունն անհամատեղելի էին համարում եպիսկոպոսի աստիճանի հետ, Բարձուման կուսակրոնության վերաբերյալ ուներ իր հատուկ մոտեցումը և «ինչպես բոլոր պարսիկները, ամուսնացած էր»²⁷: Միաբնակները, որոնց հենարանը վանքերն էին, Բարձումային համարում էին հակառակորդ և՛ դավանաբանական ուսմունքի, և՛ եկեղեցական կանոնների առումով:

Միաբնակների և նեստորականների միջև պայքարը V դարի վերջին - VI դարի առաջին կեսին հանգեցնում է ասորական եկեղեցու բաժանմանը երկու ճյուղերի, որոնցից յուրաքանչյուրը զարգացնում էր իր հայացքները և համոզմունքները: Այդուհանդերձ, դավանաբանական այս հակասությունները չէին խանգարում ասորական մշակույթի զարգացմանը: Քրիստոնեության այս երկու ուղղությունների միջև պայքարը, այսպես կոչված միսիոներական էքսպանսիան, ոչ միայն դավանաբանական էր, այլև անզիջում պայքար էր մղվում տարածապես ընդարձակվելու և նոր հետևորդներ ձեռք բերելու համար: Օրինակ, նեստորական-

²⁵ Chabot 1902, 529; Пигулевская 1979, 201.

²⁶ Chabot 1902, 526-529.

²⁷ Пигулевская 1979, 201.

ները պայքարում էին արաբական ցեղերի շրջանում միաբնակության ուժեղ ազդեցությունը թուլացնելու համար²⁸:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 2006, Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների, Երկեր, հ. Բ, Երևան, էջ 7-34:

Ասորական աղբյուրներ, 1976, հ. Ա, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Հ.Գ. Մելքոնյանի, Երևան:

Գիրք թղթոց, 1901, Թիֆլիս:

Դորֆման-Լազարև Ի. 2004, Ասորական քրիստոնեական մշակույթը և միաբնակ եկեղեցիների ծագումը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 84-92:

Թովմա Արծրունի և Անանուն, 1985, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատ. պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Վարդանյան, Երևան:

Լեո, 1947, Հայոց պատմություն, երկրորդ հատոր, Երևան:

Խորիկյան Հ. 2017, Իրանի քրիստոնեական եկեղեցու ձևավորումը Ե դարում, «Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Բ»: Հայագետ-բյուզանդագետ Կարեն Յուզբաշյանի (1927-2009) ծննդյան 90-ամյակին նվիրված Միջազգային գիտաժողով (դեկտեմբերի 7-8, 2017 թ.): Ձեկուցումներ և զեկուցումների դրույթներ, Երևան, էջ 107-113:

Տեր-Մինասյան Ե. 1971 (ա), Նեստորականությունը Հայաստանում, «Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երեվան, էջ 330-393:

Տեր-Մինասյան Ե. 1971 (բ), Բաբգեն կաթողիկոսի ժողովի թվականը և տեղը, «Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան, էջ 31-44:

Տեր-Պետրոսյան Լ. 1979, Հայերը միջնադարյան Մծբինում և Մեծ Հայքի հարավային նահանգներում, ՊԲՀ, № 3, էջ 80-92:

²⁸ Пигулевская 1964, 274; Դորֆման 2004, 86:

- Տէր-Մինասեանց Ե.** 2009, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ, 2-րդ հրատ., Ս. Էջմիածին:
- Айвазян К. В.** 1976, «История Тарона» и армянская литература IV-VII веков (Историко-филологическое исследование), Ереван.
- Пигулевская Н. В.** 1956, Города Ирана в раннем средневековье, М.-Л.
- Пигулевская Н. В.** 1964, Арабы у границ Византии и Ирана в IV-VI вв., М.-Л.
- Пигулевская Н. В.** 1967, История Нисибийской Академии, Переднеазиатский сборник, вып. 17/80, Л., с. 90-109.
- Пигулевская Н. В.** 1979, Культура сирийцев в средние века, Москва.
- Atiya S. A.** 1968, A History of Eastern Christianity, London.
- Chabot J. B.** 1902, Synodicon Orientale, Paris.
- Chronique de Michel le Syrien.** 1901, ed. J.-B. Chabot, T. II, Paris.
- Labourt J.** 1904, Le Christianisme dans l'empire Perse sous la dynastie Sassanide (224-632), Paris.
- Macomber W. F.** 1958, The Christology of the Synod of Seleucia-Ctesiphon, A. D. 486, "Orientalia Christiana Periodica (Roma)", №. XXIV (I-II), pp. 142-154.
- Sources Syriaces.** 1908, Mšihā Zkha, par A. Mingana, V. I, Leipzig.
- The Church of the East: A Concise History.** 2003, ed. W. Baum, D. W. Winkler, London, New York.

Հովհաննես Խորիկյան - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ
 արևելագիտության ինստիտուտ, Իրանի բաժին,
 առաջատար գիտաշխատող,
 hovkhor78@mail.ru

THE STRUGGLE BETWEEN NESTORIANS AND MONOPHYSITES: BARSAUMA'S ACTIVITY

Keywords: *Barsauma, Nestorians, confession, Armenia, Persia, Byzantium, Monophysit, Dyophysit, Edessa, Peroz, chalcedonism.*

Nestorianism antagonized the official Byzantine church, spreading out from Mesopotamia. It was the creed of the merchants, the class who sought independency and confronted Zoroastrianism in

Iran. The Armenian Church, being national in nature, had an intolerant position against the Byzantine church and Barsauma. At the time when the Christian church was divided into Monophysites and Dyophysites, and the Byzantines persecuted the Nestorians, the latter settled in Iran and from that time on the Persians changed their attitude towards the Christians and started to patronize the Nestorians, who were the enemies of Byzantine Chalcedonism.

In ancient and medieval ages, the ethnic affiliation was directly related to the practicing religion, the Syrians were Christians, and the Persians were Zoroastrians. This factor forced the Syrians to have their own establishment and under its patronage they could exist. They were unified around the church and the union of the craftsmen ensured the financial support.

Hovhannes Khorikyan - *PhD, Institute of Oriental Studies
NAS RA, Department of Iran, Leading researcher,
hovkhor78@mail.ru*